ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝ *Ա.Ղուկասյանի*

Կ.Գրիգորյանի

Գ. Գաբրիելյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար *Ա.Հովհաննիսյանի՝*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018թվականի հուլիսի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին.

/Գ. Միրիջանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի նորանշանակ տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի կրթության և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի ներկայացում:

/Գ.Միրիջանյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ/

3.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի (Էջմիածին) և Արմավիրի քաղաքային համայնքների ղեկավարների պաշտոնակատարների ներկայացում

/Գ.Միրիջանյան-ՀՀ Արմավիրի մարզպետ /

4. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ապահովելու մասին:

/Ա.Հովհաննիսյան. - ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավորի ժամանակավոր/

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայքների սեփական եկամուտների հավաքագրման ու համայնքներում աշխատավարձերիպարտքերի մարման գործընթացը առ 01.07.2018թ դրությամբ:

/Վ.Մկրտչյան- ՀՀ արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

6.2018 թվականի առաջին և երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ տեղեկատվություն:

/Ա.Հովհաննիսյան-ՀՀ արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար

7.Հայտարարություններ.

Ա.Այվազյան *- ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/*

Ս.Բուդաղյան *ՀՀԱրմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար/*

Լ.Հարությունյան *ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար*

Օրակարգային առաջին հարցով Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018 թվականի հուլիսի 10-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2018 թվականի հուլիսի 10-ի նիստի օրակարգը::

Օրակարգային երկրորդ և երրորդ հարցերին անցնելով՝ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանը ներկայացրեց ՀՀ Արմավիրի մարզպետի նորանշանակ տեղակալներ Ալեքսանդր Ղուկասյանին, Կարեն Գրիգորյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Սոնյա Բուդաղյանին, ինչպես նաև Արմավիր և Վաղարշապատ/էջմիածին/ քաղաքային համայնքների ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատարներ Դավիթ Խուդաթյանին և Դիանա Գասպարյանին՝ նրանց մաղթելով բեղմնավոր աշխատանքային գործունեություն:

Օրակարգային չորրորդ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ապահովելու մասին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը նշեց, որ ունենք լուրջ խնդիրներ համայնքների համացանցային կայքերի գործարկման հետ կապված՝ առաջարկելով 3000 և ավելի ավելի բնակիչ ունեցող բոլոր համայնքների ղեկավարներին ապահովել համացանցային կայքերի գործարկումը և դրանց միջոցով թափանցիկ գործելաոճի ապահովումը:

***Նա մասնավորապես նշեց, որ համայնքների ղեկավարները հասարակության և մամուլի հետ պետք է աշխատեն բաց և հնարավորինս հրապարակային, օրենքի տառին համապատասխան**:*

Օրակարգային հինգերորդ հարցը ներկայացրեց մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանը՝ ներկայացնելով Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ու աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը առ 01.07.2018թ դրությամբ:/տեղեկատվությունը կցվում է/

Նա մասնավորապես նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի մուտքերը նախատեսված 1122767,9 հազար դրամի դիմաց կազմել է 920293,8 հազար դրամ, կատարողականը՝ 82,0 տոկոս: Ըստ նրա՝ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2017 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2,8 տոկոսով:

Վ.Մկրտչյանը ներկայացրեց նաև համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման գործընթացը՝ տեղեկացնելով, որ հուլիսի 1-ի դրությամբ աշխատավարձի պարտք ունի թվով 26 համայնք և այն կազմում է 46004,3 հազար դրամ: Վ.Մկրտչյանը ներկայացրեց խոշոր հարկատուների կողմից տարիներ շարունակ չվճարած հողի հարկին և գույքահարկին՝ տեղեկացնելով, որ այդ հարկատուների մասով չվճարած գումարը կազմում է 260 մլն դրամ:

***ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը անդրադառնալով քննարկվող օրակարգային հարցին՝ խիստ կարևորեց սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների բարելավումը և աշխատավարձերի պարտքերի մարումը; Նա նշեց, որ անհրաժեշտ է ակտիվ և համախմբված աշխատանքներ իրականացնել խոշոր հարկատուների կողմից չվճարված գումարները գանձելու և համայնքային բյուջե**

մուտքագրելու ուղղությամբ՝ փաստելով, որ այդ գումարներն են նպատակաուղղվելու համայնքներում առկա խնդիրների լուծմանը: Մարզպետը նշեց, որ արտոնյալ հարկատուներ չպետք է լինեն և քննարկվող հարցը գտնվում է և մարզպետի, և ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի անմիջական հսկողության տակ, առաջարկելով համայնքների ղեկավարներին ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին՝ և ձեռնարկել համապատասխան միջոցներ դրանք հասցնելու առավելագույնի:

Օրակարգային վեցերորդ հարցով հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանը: Նա ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքային խմբերի կողմից 2018 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակներին մարզի տեղական ինքնակառավարման 18 մարմիններում սեփական լիազորությունների նկատմամբ իրավական հսկողության, ինչպես նաև քաղաքաշինության, հողօգտագործման բնագավառներում իրականացված մասնագիտական հսկողության արդյունքերը:/զեկույցը կցվում է/

Ա.Հովհաննիսյանը ընդգծեց, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իրականացված ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տվել, որ համապատասխան համայնքների ավագանու և համայնքի ղեկավարի գործունեությունը համապատասխանել է ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն ներկայացված բնագավառներում օրենսդրության պահանջների ճիշտ կիրառման գործընթացը ոչ միշտ է եղել պահպանված:

Ա. Հովհաննիսյանի խոսքով՝ համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացրած մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից հայտնաբերվել և արձանագրվել են <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների չպահպանման կամ թերի պահպանման փաստական տվյալներ: Դրանք վերացնելու նպատակով աշխատանքային խմբերի կողմից առաջարկություններ են ներկայացվել համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ավագանու նիստերում քննարկելու վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները, և վերացնելու հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները:

Ըստ այդմ՝ համայնքապետերից ստացված տեղեկատվության համաձայն 2018 թվականի 1-ին եռամսյակում վարչական հսկողությամբ արձանագրված խախտումները համապատասխան համայնքներում վերացվել են և ձեռնարկվել են կանխարգելիչ միջոցներ՝ դրանք հետագայում բացառելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է 2-րդ եռամսյակում ընդգրկված համայնքներում իրականացված հսկողության արդյունքում արձանագրված խախտումներին, ապա այդ կապակցությամբ շրջաբերական գրություններ են ուղարկվել համապատասխան համայնքների ղեկավարներին՝

արձանագրված խախտումները վերացնելու և տեղական ինքնակառավարման մարմինների իրավակիրառողական և իրավաստեղծ գործունեությունը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու համար:

ՀՀ օրակարգային հարցերի քննարկման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզի համայնքերի ղեկավարները իրենց համայնքերի խմելաջրի սպասարկման ոլորտում առկա թերությունների վերաբերյալ իրենց մտահոգությունները հայտնեցին <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ Արևմուտք տարածաշրջանի տնօրեն Արամ Սահակյանին, որի առնչությամբ Ա.Սահակյանը տվեց համապատասխան պարզաբանումներ:

Համայնքներում հրդեհավտանգ իրավիճակներից հնարավորինս խուսափելու առնչությամբ հակիրճ խոսքով հանդես եկավ Արմավիրի մարզային փրկարարական ծառայության պետ Հ.Մարգարյանը՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին իրենց ազգաբնակչությանը իրազեկելու և բացատրական աշխատանքներ տանելու՝ խոտածածկ տարածքների այրման միջոցով մաքրման դեպքերի վտանգավորության և հրդեհավտանգ իրավիճակներից խուսափելու վերաբերյալ:

Այնուհետև հայտարարությամբ հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ա. Ավազյանը, աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանը և իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանը:

- *Ա.Այվազյանն իր հայտարարությամբ անդրադարձավ մարզում գյուղմթերքի՝ գազարի, կաղամբի, կարտոֆիլի և սոխի իրացման խնդիրներին, ինչպես նաև հակակարտային կայանների գազի լիցքավորմանը և դիզվառելիքին առընչվող հարցերին:*
- *Ս.Բուդաղյանն իր հայտարարությամբ նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի շրջաբերական գրություններով առաջարկվել է համայնքների ղեկավարներին ներկայացնել համապատասխան տեղեկատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նախադպրոցական կրթական ծրագրի լիցենզավորման գործընթացի և նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեության մասին՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին պահպանել գրություններում նշված ժամկետները:*
- *Լ. Հարությունյանը իր հայտարարությամբ անդրադարձավ << Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքով, << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված ժամկետների և կարգի կիրառմանը, ավագանու անդամների պարտականությունների կատարմանը:*

ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը ամփոփելով օրակարգայի հարցերի և հայտարարությունների քննարկումները՝ մասնավորապես նշեց, որ համայնքների ղեկավարները և ավագանիները իրենց լիազորությունների և պարտականությունների շրջանակներում պետք է աշխատեն լինել մաքսիմալ ուշադիր, օբյեկտիվ, պատասխանատու և անաչառ, անեն հնարավորինս բնակչի

հոգսերն ու խնդիրները թեթևացնելու համար: Մարզպետն անդրադարձավ նաև համայնքների ղեկավարների աշխատակազմերի և համայնքային ծառայողների արձակուրդներին որոնք, պարտադիր կարգով պետք է տրամադրվեն համապատասխան ժամկետներում:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Գ.Միրիջանյանը. մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

04.08.2018

X

VERIFIED OCSP 04.08.2018 13:18:32 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝ Մ.Առուշանյան